

բէն, Թիւրքերէն և պարսկերէն. զոս բիւրքերէն տաղեր ալ գրած է Թիւրքանցիին:

Իր արուեստին վրայ կը խօսինք յաջորդ հաստատմին մէջ, երբ զայ կարգը բանաստեղծ Թիւրքանցիին:

Հոս բաւական է, իբրեւ մէկ կողմէ իր կեանքին, ինչ որ ըսինք իր կրօնաւորութեան վրայ, իբրեւ միտքան Մշտլ Ս. կարապետ վանքին: Չենք գիտեր թէ կաթողիկոսութենէ յառաջ առաջնորդական պաշտօն ալ վարած է. — շատ հաւանական է ասիկա, և մենք կը կարծենք թէ Յովհաննէս Բ, ո՛չ միայն բնիկ Թիւրքանցի է, այլ նաև Առաջնորդը կամ Եպիսկոպոսը Թիւրքանի եկեղեցւոյն: Այս ենթադրութիւնները կ'ընենք նկատի առնելով իր Տաղերուն վերջաւորութիւնները, որ կը շնչոտ Թիւրքանը ըլլալը:

Եւ Յովհաննէս Թուրքանցի:

Եւր ինքնափառաբանման մըն է բանաստեղծ և փիլիսոփայ տաղասացի մը համար, որ աշխարհի բոլոր ունայնութիւնները կ'երգէ ու կը գեղեցկացնէ դանտը, անգամ մըն ալ շնչոտներ, պարզապէս բարոյական դասեր հանելու համար ատենցմէ իր Տաղերը սիրողներուն:

Թիւրքանցի երկարակեաց մը եղած է, և

խնամքով կ'ուզենք գիտել տալ թէ ծարմնի հանգիստներուն մէջ հալած մաշած անձի մը համար բնախօսապէս անհնարաւորութիւն մըն ութտունէ ասելի տարիներու գործունեայ կեանք մը ապրել:

Թիւրքանցիին «Է՛ ման, Բանի՛» գեղյիւնեմ տալը կը վերջացնէ սա խօսքերով:

— Յովհաննէս Թուրքանցի,

Չուր կ'ասես, զայլ որ խրատես:

Եօրամտուն սարի լցեր

Ի մեղաց մէջն ևս կացեր:

Թուրքանցիին վախճանեցաւ կամ 1524ին վերջը և կամ 1525ին սկիզբը. պահ մը ենթադրելով որ այդ տաղերը գրած ըլլայ 1525ին, այն ատեն ձնած պիտի ըլլայ 1525—70=1455ին: Իր կաթողիկոսութեան տարին է 1489 Յնթ. 26, և այդ կը նշանակէ թէ կաթողիկոս եղած պիտի ըլլայ 34 տարեկանին, (1489—1455=34) ինչ որ հաւանական չի թուիր մեզ. առնուազն 45 կամ 50 տարեկան պէտք է ենթադրել կաթողիկոսութեան կոչումը ատեն. այս հաշուով Թուրքանցիին վախճանած պիտի ըսենք 80—85 տարեկան, որուն 36ր նուիրեց Վիլիկոյ աթոռին ծառայութեան, ինչպէս որ պիտի տեսնենք:

(Շարունակելի)

Բ. Ե.

ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ս. ԵՓՐԵՄԻ ԱՍՈՐԻՈՑ

ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒՄԻ ՎԱՍՆ ՆԿՈՍԴԻԵԱՅ ՔԱՂԱՔԻՆ

Ինքն ճարտարութիւնն ուսուցանելոց է զտուգ միջոյ: Զի մի մի ճարտարութիւն, իբրեւ զարինա՛հ հարազատութեանն է: Մի գրադումն բազմաց, իբրեւ զտո՛հմ միջոյ է: Եւ աւարտք ի ձեռն դասու, իբրեւ զազգէ՛ կապեալ լինին: Եւ լուծ միտքան բաժանելոց, մի՛ հարթընթացս⁽¹⁾ ուսուցանէ: Լացցին երախանք զերախանս, զի խափանեա՛ց մահ զտունս նոցա: Ո՛չ ուզին սեղանք նոցա առաջի իւրեանց ի բազմականս: Ո՛չ լինին պսակք պըսակք մանկտի զսեղանովք նոցա: Դառն թաղողք միմեանց, թաղեցա՛ն առանց թաղաւզաց⁽²⁾: Եղև նոցա բարկութիւն թաղաւզ,

և ելլից գտեղի բազմաց: Փոխան ճշոյ կանանց, բարբառեցա՛ն և ճչեցին սրահք: Անկա՛ն որմք ի վերայ աչաց: Փոխանակ⁽¹⁾ սպասելոյ ձեռաց, անկան յարկք և ընդ հանդերձից ծածկեցին զմերկութիւն մեռելոց: Զկեանս նոցա և զբմահս իւրեանց պաշտեցին յարկք նոցա: Ծածկեցին զթըշնամանս մերկաց, և զառականս մեռելոց: Զգոտացուցին զմերկութիւն կենդանեաց, ցածուցին զմեռելութիւն մեռելոց ծածկեցին: Որդիք նոյի ծածկեցին զհայրն իւրեանց, և զյարկքն ալն զրնակիւս իւրեանց: Արժա՛ն է երախանաց որ բազմեալն են, յիշիլ զերախանն որ կորեանն: Մտցէ փոքր մի տրտմութիւն, սաստեղէ յարեցութիւն: Լացցէ՛ մաճակալ զլը՛նկեր

(1) Տոր բառ, որ չի՞ք ի բառգիրս:

(2) Թ. ունէր՝ բաղդաց, զոր ուզէ՛ք սքսգրիցն յաւելլով աւ ի վերայ ձողիցն:

(1) Թ. ունէր՝ փոխան, յո յաւելու ուղղիւն՝ ալ:

իւր, եւ մշակ զգործակից իւր: Եղիցի խորհուրդ նոցա երկիր, ժողովեցեն ի նմանէ զարմարս: Ազամ մաճակալ առաջին եղ լուծ ծննդոց⁽¹⁾ իւրոց: Ելո՛յժ մահ ի լծոյ անտի զորդիս աղամայ իրբեւ զազամ: Դադարեցին վաստակեալք ի վաստակոց, եւ տկարք յաշխատութենէ: Զընթացս այն առանց թուոյ, զադարեցոյց մի հրաման: Լացցեն տգէտք զտգէտս, եւ միամիտք զ[ը]նկերս իւրեանց: Աւրէն է անմեղութեան, զի լացցէ՛ զանմեղութիւն: Լացցեն խորապէտք զխորապէտս, եւ հանճարեղք զմաստունս, զի լուսաց ի գծոս ուսումն, եւ խափանեցա՛ւ անգ իմաստութիւն: Յաղթեցին իմաստունք աղբերաց, զի խառնուն էին բղխմունք իւրեանց: Հատու ի գծոս իմաստութիւն նոցա, զադարեալ եւ հաւատարեալ են ընդ տգէտս: Աւրէն է ընտրութեան, զի լացցէ՛ զիմաստութիւն: Տրամեցի գատաւոր վասն ընկերի իւրոյ, եւ իշխան վասն զուգակցի իւրոյ, զի թափուր եղեն դրունք իւրեանց, եւ կորեան յանկարծ կարգք նոցա: Աւրէն է զխառնութեան, զի լացցէ՛ զպետութիւն: Լացցեն եւ մեծատունք զմեծատունս զ[ը]նկերս⁽²⁾ իւրեանց, զի ի միասին մօին ի գծոս ընչիւք եւ որդւո՛վք իւրեանց: Յանկողինս նոցա կակուղք, եւ ի մարմինս նոցա սպիտակք: Որ զգեցեալ էին փափուկս, ահա զգեցեալ են կարկառ մե՛ծ: Աւրէն է եւ իշխանաց, զի զգասցին վասն իշխանաց: Մխիթարեցին եւ աղքատք ի վերայ աղքատաց ընկերաց իւրեանց, զի ի միասին մըտին ի գծոս ընդ թաղաւորս եւ ընդ որդիս թաղաւորաց: Յաճախեցէ ծառայից մխիթար, ծառայակցաւք ընկերաւք իւրեանց, զի ազատեցան յանկարծ առանց ապտակի եւ առանց դրոյ, Լացցեն անմեղք զանմեղս, զի ընդ մտանել նոցա եղեւ է՛լ իւրեանց: Ընդ ելանել յարգանգէ, եղեւ մուտ նոցա ի հոգ: Մեռան անմեղք ի զոյրոցս, հաւտք հաւտք իջին ի գծոս: Ելանէին միշտ եւ գային, ճարակէին զուսումն եւ մշտանէին: Յայնմ աւուր մեծի աղետից, իկն է՛լ յաւիտենից: Ոչ ետես մայր զսիրելի իւր, եւ ոչ կարճադաւակ⁽³⁾ զմիամուր իւր, Ամենայն ոք

ուր եւ զիպեցաւ, անգստին եմուտ ի զբժարս: Լացցէ հարսն զ[ը]նկեր իւր, զի ընդ սկզբա՛նն եղեւ կատարումն իւր: Պաշտեաց առադատ նորա զերկոսեան, զի եղեւ առադա՛ստ եւ զերկման: Լացցէ խառնուն զ[ը]նկեր իւր, զի ընդ խառնման իւրեանց մա՛հք նոցա: Կորեան առիթք յառթութեան⁽¹⁾, ետուն հատաւտութիւն յաւիտենից: Կողմն զ[ը]նկերն ոչ նենգէ, զի զադարեցին ի հոգ փոփոխմունք: Երազտան էր անգ մահ, զի զերազո՛ւնս այն որոտայր: Եմուտ մահ եւ յաժըշտակեանց զառաւանակս⁽²⁾, եւ զառաւանդակս⁽³⁾: Լացցէ կոյս զ[ը]նկեր իւր, զի զրկեալ են յերկուց կողմանց: Ոչ ընտրեցին զսրբութիւն, եւ ո՛չ ստացան զամուսնութիւն: Լացցէ ծընեալ զ[ը]նկեր իւր, եւ յղի զզուգակից իւր: Միոյն թաղեալ է մանուկ ի զոգ իւր, եւ միւսոյն սա՛ղմն յորովայնի: Կին ամուլ մխիթարեցի ի վերայ ամուլ որ կորեան, զի ոչ հերձան ընտերք⁽⁴⁾ իւրեանց, եւ ոչ ապականեցան մանկունք իւրեանց: Հեղձեալ է մայր եւ առ նմին հեղձեալ եւ ընկեցեալ սիրելիք իւր: Մածկեալ են ամուլ կանայք եւ ընդ նոսին արտմութիւնք իւրեանց: Մի արտմեցի ամուլութիւն, զի ընդ սուգ իւր եւ մխիթարութիւն: Ոչ կրէ յորովայնի զամուս, ո՛չ անուտ ի զիրկս իւր զաման: Ո՛չ կայ յաշտեան մահու: Ո՛չ լայ ի դրաց զերկմանին: Իզաց առաւել աւրէն է⁽⁵⁾ լալ զամենեւեան առհասարակ, զի լի՛ են զթովք անձինք իւրեանց, եւ աչք իւրեանց արտասուաւք: Յորժամ մեռուցանեն զընեքին զութս, զեղո՛ւն եւ հեղուն զարտառու արտաքս: Լացցէ ծերն զ[ը]նկերս իւր, զի ո՛չ պատուեցան ալիք նորա: Եւ եղեւ բարկութիւն նմա թաղաւղ, թաղեաց զնա եւ զթաղաւղս իւր: Աւրէն է եւ ալեւորութեան, զի չարչարեցի՛ ընդ ծերութեան: Լացցէ զուխտ նոցա ուխտս այս մեր, եւ զցածունս⁽⁶⁾ նոցա ցածունքս մեր: Աւրէն է սիրոյ եղբարց, զըշտանալ ընդ

(1) Նոքանէ բառ, որ չի՛ր ի բառգիրս:

(2) Բառ անմանօր, քերես = զառեւանակս:

(3) Թերես զառեւանգեալս:

(4) Օր. ունի՛ բնկերք. ուղղիցն դնէ ի լուսանցս՝ ա. բոս այսմ բնքեանի է՛ բնաւերք:

(5) Է յաւելում ուղղիցն, ի վերայ սողիմ եղեալ:

(6) Օր գրէ զցածուն, ուղղիցն յաւելումս:

(1) Օր. գրէ՛ ծնողոց:

(2) Օր. ունի՛ զնկերս:

(3) Նոր բառ:

սուգ անգամաց իւրոց, դարձցի միւսիւթա-
րեացի, զի չոգան իրրեւ զվաճառականս,
յաւգնութիւնս եւ ընդ նոսա աղաւթք որ
առաւել են քան զգանձս: Էին ընդ նոսա
պահք սուրբք, որ լաւ են քան զսկանս
ազնիւս: Չոգաւ ընդ նոսա միաբանութիւն,
որ զի զմարդարիտ: Չոգաւ ընդ նոսա հա-
ւատ, որ պիտոյ է թաղի արքայութեան:
Չոգաւ ընդ նոսա կուսութիւն, մարդարիտ
պատուական պսակի: Չոգաւ ընդ նոսա
զգաստութիւն, պատմաւածն որ մայելէ
սրբոց: Տրամեցին սիրով սարկաւազութիւն,
վասն սարկաւազաց ընկերաց իւրեանց, զի
չոգան ի հանդիպութեան տեղեացն, եւ
մեկնեցան ի ժողովատեղեաց⁽¹⁾: Ար պաշ-
տեցին յերկրի սրբապէս, ժառանգէն ի
բարձունս յիրաւի: Աւրէն է այս սիրե-
լեաց, զի յիշեսցեն զանդամս իւրեանց,
Յիշեսցեն եւ երիցունք զծննս պատուա-
կանս ընկերս իւրեանց, որ իրբեւ զպսակ
լինայ⁽²⁾ էին ժողովրդեանն որ ննջեաց ի
տապնապի: Եղիցի պաշտան այս մեր,
հայելի՛ այնմ պաշտաման: Յայսմ մատա-
ւոր սրբութեան յիշեսցեն զհեռաւորն:
Յայսմ տաճարի լացցուք զայն, եւ նովա՛ւ
ընթացուք առ սա: Յայսմ եղիցի աղա-
չումն⁽³⁾ մեր, եւ նովաւ եղիցի մեր արհա-
ւիրք: Քահանայք միւտ ի սուգ մտցնե, զի
տիրեալք բարկութիւն ի սրբութեան: Վասն
սրբութեան եւ տան սրբութեան, երկիւզ
է բերանոյ եւ խաւով: Եւ թերեւս եւ
բովս իսկ կազմեաց բարձրեալն ժողովր-
դոց իւրոց, զի երեւեսցի սգացեալ այն,
յայնմանէ որում ոչն ցաւի: Այս համարեւ,
իրբեւ բով քննէ զմիտս լուրեայն գուրա-
խութիւն կամ գորտմութիւն ուրուք նը-
կարէ՛ յերեսս նորա: Ար ընդ այս ոչ վըշ-
տանայ, ո՛չ այնպէս է բնութիւն իւր: Եւ-
րով ինչ վըշտացոյ գնա, եւ տես զի ամե-
նեւին վշտացոյ է: Զի՞նչ մեծ է քան
զսրբութիւն, կամ մաքուր քան զտուն
սրբութեան: Երկոքին թշնամանեցան
անդ: Ո՞ր գուարթացուցէ զգէմս իւր, զի
լուեաց ընթերցուած գրոց եւ հաղիգոյք⁽⁴⁾
սաղմոսաց: Զի՞ք ընթերցուածք ի ժողովս
նոցա, եւ ոչ սաղմոսք ի տաւնս նոցա:

Հատաւ կարգ ընթերցողաց, զպիւր զրնկեր
ոչ իջուցանէ տեղին ուրացողաց: Հերձան
ի նմանէ երկրպագուք: Բեմն որ շինեցին
ի միջի, եղեւ աղբիւր ի միջի: Ընթացան
առ նոս ականջք ծարաւք, եւ արբիւն ի
նմանէ կենդանութիւն: Արբիւն ի նմանէ ու-
սումն, առին ի նմանէն եւ ետուն նմա:
Հատոյց բերան փոխանակ ականջաց, գո-
վութիւն փոխանակ թարգմանութեան:
Երեւանն եւ զգայութիւնք եւ անգամք:
Մի փոխ առնու, եւ միւս հատուցանէ:
Գլխին՝ յորժամ առնու զլանայ, բերան
հատուցանէ զպարտս նորա: Ստոյգ է հա-
ւատարմութիւն անգամաց իրբեւ զընտրողաց:
Ի մէջ բերեն զաւգուտ, ի միջոյ հատու-
ցանն զպէտս: Ապականեցան անգ զգա-
լութիւնք, զգայուն ընկերաց ինչ չէ՛ աւ-
գուտ: Այն եւս է ունկան թարգմանութիւն,
եւ ոչ ի բերանոյ գովութիւն: Վայելէ եր-
կատասանիցս այս, սուգ առնուլ վասն ըն-
կերաց իւրոց. զի ի վախճանի իրբեւ տես-
ցեն զընտա, ելցեն ընդ առաջ շնորհ ու-
նելով: Տրամեցի հովիւ եւ հաւտի իւրոյ: Զի
ի զլուսն խաչին եւ հաւտի իւրոյ⁽¹⁾, եմուտ
ի դրունս դժոխոց: Հովին ի գլուխ հաւտի
իւրոյ, ո՛չ եւս կայ ըստ սովորութեան:
Ո՛չ եւս չողա[յ] աջ իւր ի վերայ գլխոյ մա-
քեաց իւրոց: Ո՛չ եւս քրքրեն վերջաբինք⁽²⁾
զխաչն այն որպէս սովոր են, զի ճարա-
կեացէ դարաւտ հոգեւոր, զաղաւթս որ ու-
մենեւին ուրախութիւն է: Պէ՛սպէս հա-
մաճարակ էին: Ի սաղմոսից նուա՛գս նը-
ւագս: Եւ ի նուագաց առա՛կս եւ աւրի-
նակս: Եւ թարգմանութեան, գա՛նձս եւ
զիրս: Ո՛չ եւս պիտի հաւտ այն զբերմանն
որպէս սովոր էր: Զի վարդապետութիւն,
իրբեւ զա՛ղ տային նմա արբանեակք:
Ո՛չ ընթանայ ի տաճար տեառն իւրոյ յա-
փշտակել զբանս յականջս իւր: Յափըշ-
տակել զսրբութիւն ի ձեռս իւր, եւ զղեղն
կենաց ի շրթունս իւր: Բնակաւոր էին անդ
ցածուն կանայք, որոշմամբք եւ ոչ սովո-
րութեամբ, այդուն եւ երեկուն ի յա-
ղաւթս, ի յիշատակս եւ ի տարեկանս:
Համարձաւ թեւ ամենեցուն, ի մի սուրբ

(1) Պակաւ ի բաղկիւս:

(2) Այսպէս յորժանիւս:

(3) Զի ի բաղկիւս:

(4) Յայն է թէ = աղիւս:

(1) Զնաւաւոր՝ «զի ի գլուխ...» մինչեւ «իւ-
րոյ» լուսնու ուղղիցն ի լուսանցան:

(2) Պակաւ ի բաղկիւս:

ժամաստեղ(¹) եղևն բոյնք զերեղմանք նոցունց ի վախճանի, Թոշին յաստղաստն: Խափանեցան ժամք նոցա, եւ լսեցին յանկարծ ընթացք նոցա: Հանդերձեալ է փեսայն մխիթարել զցածունս իւր յարքայութեանն իւրում: Թոշուն յամենայն կողմանց քաղէ կուտ որդւոց իւրոց: Եւ յորժամ երթայ տա սիրելիս իւր, բաշխէ՝ բերան իւր զկերակուր: Եւ այն ուսուցիչ գեղեցիկ իւր բաշխեաց զկենդանութիւն ի զբոց որ լի են կենսաք յաղեցոյց զորդիս իւր ուսմամբ: Ականջք ուստերաց եւ զբուտերաց իւրեանց ի նման բերանոց Թոշնոց: Բանանային քաղցելաբար քաղցր բանից բերանոյ նորա: Բերանք հոգւոյ լսելիք են: Ականջաք առնուն(²) զգարման: Զամբ իւր ուսումն է: Կերակուր իւր բան բերանոց: Բերան շտեմարան է բանից, կերակրէ՝ զտկանջս քաղցեալս: Ո՛չ բանայ ձերն որդւոց իւրոց զշտեմարանս բանից որպէս(³) ստվոր էր: Եղև նոցա հովիւ ի կենդանիս, եղև նոցա ընկեր ի մեռեալս: Վարդապետն աշակերտ ասէր, ի կենդանի կըտակարանաց ժողովեաց զկերակուր կենաց: Զամբեաց բերան իւր ախանջաց, ետես զուստերս եւ զգոտերս իւր թէ իրբեւ զձագս Թոշնոց փափագեն ընդ տուօջ հարց առնուլ ի նմանէ զգարման: Ո՛չ բանայ արծուին զբերան իւր տալ որդւոց զկերակուր: Գլուխն եւ հայրն բազմաց, հեղձեալ եւ ընկեցեալ է ընդ բազումս: Հեղձոյց բարկութեան զորդիս ընդ թեւովք հայրութեան: Ոչ ետ զտեղին աշակերտի, զի եհաւ բարկութիւն զկարդն: Ոչ կացոյց զլուսն հաւտի իւրոյ, զի ընդ նմին չոգաւ խաչն իւր: Կարգ ձեռին տեսան մերոյ ոչ հատանի մինչեւ զայ: Կտրեցաւ տակն ի սակաւս, կապեալ է կարդն ի բազումս: Դայ առնու եւ թողու: Եկուլ զհաւտ այն ազահն: Դիմեաց մահ ազահ եւ եկուլ զհովիւ եւ զհաւտ, եւ զարբանեակս: Պահանջէ զխաչն իւր ամենաբաւտն(⁴), թքանէ մահ ամենակուլ: Մտանէ եկեղեցի տըրտմեալ յաղին, լի՛ ուրախութեամբք: Վայե-

լէ եւ զլիւսն հաւտիս մերոյ, վշտանալ վտան ընկերի(⁵) իւրոյ: Լացցէ եկեղեցի այն զքոյր իւր, զի չոգան ի զոգ իւր սիրելիք իւր: Բարկութիւն որ ի վերայ չարաց, հեղձոյց ի ծոց իւր զձագս իւր: Վայելէ եկեղեցւոյ այս թագաւորի, զի լացցէ՝ զհարսըն թագաւորի: Լացցէ քաղաքս մեր ըզմայր իւր մեռան ի չար մահուն: Գաղաքն քաղաք արքայութեան եղև զերեղման որդւոց իւրոց: Եւ բարկութիւն հեղձոյց յանկարծ ընդ թեւովք նորա ըզսիրելիս իւր: Զի մայր էր նա զթած եւ զորով, ո՛չ մեկնեցաւ ի սիրելեաց իւրոց: Տարածեաց զթիւս իւր զանմեղաւք, եւ անկաւ մեռաւ ծնողովք իւրովք: Վայելէ զստերաց լալ զմայր իւր ի հեռոյ, ցածեան ի նմանէն երեքին համբաւք: Գոյժ ի վերուստ ընդոստոյց զնա: Նկարեալ է լաւագ ի միտս քո զմի քաղաքն մեծ եւ վայելուչ: Որոյ բարձր եւ գեղեցիկ են շինուածքն: Խլտ եւ վայելուչ յարկք իւր: Փառաւոր եւ փափուկ բնակիչք իւր: Լի՛ է ամենեւին բնակչաւք: Որոտա՛յ ամենայն բարբառովք: Զարդարեալ է ամենայն իւրիք: Նկարեալ այսուհետեւ ի միտս քո զքաղաքն հզաւր եւ ոստիկ, եւ նայեաց զի զոչեաց յանկարծ եւ անկաւ, հեղձոյց զբնակիչս իւր: Գեղեցիկ ժամանակեակք(⁶) քաղաքին, ահա եղևն կարկաճք կարկառք: Փողոցք կայանք իմաստնոց, կործանեցան ի վերայ իմաստնոց: Եւ ոչ միաք առոյգք յաղթին այսմ արտաութեան: Ողորմ տեսիլք են, զի հեղձան փեսաւէրք եւ փեսայք ի հարսանիս: Խառնեցան արեւնք ընդ գինի նոցա, եւ ձայն շարժման ընդ երգս նոցա: Ընդ կաքաւս հարստեանց նոցա, եղև շարժումն շինուածոց նոցա: Եւ զայնցին շինուածքն արբելոց, զողացին ճեցին եւ անկան: Հեղձաւ մայր եւ զստերք իւր: Հեղձաւ զօքանչ եւ նուանք իւր: Եթէ նկարեցես տա աչս քո զայն տեսիլ, զարհուրեցի՛ս: Եւ անգութ որ հեռի է ի զթոյ եւ յարտասուաց, մեղկի եւ լուծանի՛ յողորմ տեսլենէն զոր տեսանէ: Ո՛չ մի սուգ տեսանէ:

(¹) Կոր բառ. այլուս անձանք — ժամաստեղ:

(²) Օր. ունի՝ առնու, յոր յաւելու ուղղիչն Ե ի վերայ չողին:

(³) Օր. գրեալ ունէ՛ր՝ որ, յորոյ վերայ ուղղիչն զրեւէ՛ պէս:

(⁴) Կարածեւ բառ, որ չիք ի բառգիրս:

Հրապարակեաց

Ֆ. Յ. Մ.

(⁵) Օր. գրէ՝ լոկ՝ Եկերի:

(⁶) Պակասէ ի բառգիրս: